ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մենթոր՝ Վահան Սարգսյան

Վերապատրաստվող՝ Ա. Ադամյան

Արմավիրի մարզի Հովտամեջի միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …… 3
- «ՇԱԽՄԱՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ----------6
  ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ
- ՇԱԽՄԱՏԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ……..7
- ՇԱԽՄԱՏԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԲԱՐՈՅԱԿԱՄԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԾԸՆԹԱՑՈՒՄ……. ……8

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ՇԱԽՄԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

- Տարրական դպրոցում շախմատի պարապմունքների ազդեցության հետազոտության կազմակերպում…… 11
- Հետազոտության արդյունքների վերլուծություն……13
- Եզրակացություն ……14
- Գրականության ցանկ …… 15
- Հավելված ……16



Ներածություն

Թեմայի արդիականությունը:Մանկավարժական գիտության մեջ արժեքային համակարգ հասկացությունը ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Կրթության որակի բարձրացումը շարունակում է մնալ պետության գերակա խնդիրներից մեկը: Հանրակրթության ժամանակակից խնդիրների մեջ կարևորվում են անհատի անձնային որակների ձևավորումը, ստեղծագործական ունակությունների, վերլուծելու, համադրելու, քննադատական մտածողության, նախաձեռնողականության կարողությունների զարգացումը: Այս իմաստով շախմատային խաղը տալիս է անձի զարգացման հիանալի հնարավորություն: Պատահական չէ, որ ՀՀ կրթության նոր չափորոշչի համաձայն Հայաստանի Հանրապետությունն անցնում է կարողունակությունների վրա հիմնված ուսուցման:

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականից սկսած «Շախմատը» դարձել է պարտադիր ուսումնական առարկա և դասավանդվում է հանրակրթական բոլոր դպրոցների տարրական դասարաններում: «Շախմատ» առարկայի մուտքը դպրոց ակնհայտ փոփոխություններ մտցրեց սովորողների կյանքում:: Շախմատ խաղալով՝ երեխան ամենից առաջ սովորում է ինքնուրույն մտածել և որոշումներ կայացնել: Նույնիսկ ամենապարզ լուծումները նրան սովորեցնում են պատասխանատու լինել, հաշվի առնել ուրիշի տեսակետը, կանխատեսել նրա վարքը և դրանց հիման վրա կառուցել սեփական դրսևորումները: Ժամանակակից կյանքի մարտահրավերներին դիմակայող, վերլուծող, համադրող, նախաձեռնող երեխայի, ապագա քաղաքացու անձնային որակների ձևավորման գործընթացում շախմատի ներուժով և տարրական դպրոցի տարիքի երեխաների իմացական կարողունակությունների և բարոյակամային որակների ձևավորման պահանջով էլ պայմանավորված է մեր հետազոտության թեմայի արդիականությունը: Փոխվեցին արժեքները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի է թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ են քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով են դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ են դառնում:Աշխատանքը միտված է բացահայտելու և ներկայացնելու աշակերտների մեջ ձևավորված արժեքները: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է:

Հետազոտության նպատակն է՝

- ՈՒսումնասիրել հանրակրթական տարրական դպրոցում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ իմացական կարողությունների և բարոյակամային որակների ձևավորման միջոց:

Հետազոտության խնդիրները: Մեր հետազոտության նպատակի հիման վրա մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Բացահայտել շախմատային խաղի ազդեցությունը երեխաների իմացական կարողությունների զարգացման և բարոյականային որակների ձևավորման գործընթացի վրա:
- Պարզել արժեքային համակարգի դերը դասաժամերին:
- Որոշել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ:

- Հետազոտության օբյեկտ է հանդիսանում դասարանը, որտեղ կատարել եմ դասապրոցես:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ:

- Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ խմբային խաղերի միջոցով, բեմականացումներով, ֆինարկումներով, սալիկաշարերի պատրաստմամբ, միջոցառումների անցկացմամբ, խաղերի միջոցով, ներկայիս լայն մեթոդաբանական գործիքները կիրառելով կարող են, նորովի և նոր մոտեցմամբ, աշակերտների մեջ սերմանել արժեքային մի ամբողջ համակարգ

«ՇԱԽՄԱՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

Հիմք ընդունելով, որ շախմատ ուսումնական առարկան նպաստում է սովորողների ինտելեկտի զարգացմանը՝ առավելապես կարևորում ենք շախմատի դերը մտածողության ձևավորման գործընթացում: «Շախմատ» ուսումնական առարկան զարգացնում է կոնվերգենտ ու դիվերգենտ մտածողության ձևերը: Այն հնարավորություն է տալիս մտածելու մի քանի հնարավոր քայլերի մասին, գնահատելու դրանք և ընտրելու լավագույնը:

«Շախմատ» առարկան նպաստում է սովորողների մոտ վերլուծական և քննադատական, ստեղծագործական և այլընտրանքային մտածողության ձևերի զարգացմանը, կանխատեսելու կարողության, իրավիճակների ընթացքի վրա ազդելու ունակության ձևավորմանն ու զարգացմանը, երևակայության և ստեղծագործականության միջոցով սովորելու կարողության խթանմանն ու կրթության արժևորմանը:

«Շախմատ» ուսումնական առարկայի յուրացման ընթացքում զարգանում են սովորողների մտավոր գործողությունների ներքին պլանավորման, բարդ իրավիճակներում որոշումների ընդունման, ինքնավերլուծության կարողությունները, հուզական ինտելեկտը, ինչպես նաև վարքի ինքնակազմակերպումը, կարգապահությունը և պատասխանատվությունը:

https://www.arlis.am/documentview.aspx?docID=176077

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1. ՇԱԽՄԱՏԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Կրթական բարեփոխումների համատեքստում, 2011 թվականից Հայաստանի Հանրապետությունում «Շախմատ» առարկան ներառվել է Հանրակրթության պետական չափորոշչում և դասավանդվում է բոլոր հանրակրթական դպրոցներում: Փորձարարական հետազոտությունները հաստատել են շախմատի բացառիկ նշանակությունը երեխայի կամքի ուժի, աշխատասիրության, նպատակասլացության, համբերատարության, բարդ և անծանոթ իրավիճակներում կողմնորոշվելու, ինքնուրույն նպատակային գործունեության և ինքնակազմակերպման կարողունակությունների, հմտությունների ձևավորման, ինչպես նաև շախմատային օժտվածությամբ երեխաների բացահայտման գործում :

«Շախմատ» խաղի ընթացքում տեղի է ունենում գլխուղեղի երկու կիսագնդերի միաժամանակյա համահունչ աշխատանք, ինչի շնորհիվ նկատվում է ինչպես տրամաբանական, այնպես էլ վերացական մտածողության ակտիվ զարգացում: Շախմատի պարապմունքների ընթացքում երեխայի մեջ աստիճանաբար ձևավորվում է ինքնուրույնություն, հաստատակամություն, համառություն, նստակյացություն և այլն: Առավել կարևոր են շախմատի դասերը գերակտիվ երեխաների համար, որոնք դժվարությամբ են հինգ րոպե նստում իրենց տեղում: Նրանք տարվում են խաղով և դառնում ավելի հանգիստ, հավասարակշռված: Մտապահման գործընթացները ինտենսիվ օգտագործվում են շախմատ խաղալիս, քանի որ խաղացողն օգտագործում է ինչպես երկարաժամկետ, այնպես էլ գործառնական հիշողությունը՝ կիրառելով թվային, տեսողական տեղեկություն: Ուսումնասիրությունները հաստատել են, որ շախմատով զբաղվող երեխաների մտավոր ռեակցիայի արագությունն ավելի մեծ է:

Անձի ռազմավարական մտածողության զարգացման հիմնական ժամանակը յոթից տասնչորս տարեկան տարիքն է: Մտածողության զարգացման լավագույն խաղերից մեկը շախմատն է: Այն նպաստում է ռազմավարական մտածողության զարգացմանը, ինչպես բոլոր այն խաղերը, որոնք ձևավորում են ուշադրություն, կանոնները պահպանելու ունակություններ և մի քանի քայլ առաջ հաշվարկվող գործողությունների հաջորդականություն: Շախմատ խաղալով մրցակցի հետ՝ երեխան աստիճանաբար սկսում է խաղալ նաև ինքն իր հետ մտքում: Այսպիսով, խաղացողի ուղեղն աստիճանաբար սկսում է աշխատել ինչպես տեղեկույթի մտապահման և վերարտադրման, այնպես էլ ցանկալի արդյունքի հասցնող ոչ ստանդարտ լուծումների և օրիգինալ գաղափարների որոնման ուղղությամբ: Շախմատը զարգացնում է խաղի բոլոր հնարավոր տարբերակները քննարկելու, վերլուծելու, կանխատեսելու, ելքերը

հաշվարկելու, արագ որոշում կայացնելու, վճռորոշ քայլ կատարելու կարողություն: Շախմատի պարապմունքների ժամանակ ձևավորվում և զարգանում է նաև երեխաների հաստատակամությունը, օգնում է ազատվել ամաչկոտությունից, ցուցաբերում են նպատակասլացություն, կամք, համառություն, սովորեցնում է արժանապատվորեն տանել պարտությունը, սեփական անձին վերաբերվել ինքնաքննադատաբար, վերլուծել սեփական գործողությունները՝ քաղելով արժեքավոր փորձառություն, դաս և այլն: Շախմատային խաղի ուսուցման քայլերը երեխային հնարավորինս պարզ և հասանելի է: Ուսումնական գործընթացի առանցքային կետը երեխայի գործունեությունն է, երբ նրանք հետևում են, համեմատում, դասակարգում, վերլուծում, գտնում օրինաչափություններ, եզրակացնում:

Ներկայացնենք շախմատային խնդրի օրինակ, որի միջոցով աշակերտները սովորում են կանխատեսել, գնահատել գործողությունները (իր, հակառակորդի), այսինքն նպաստում է մտածողության զարգացմանը: Օրինակ, երբ երեխային ծանոթացնում են ձիու՝ շախմատային ֆիգուրի, հետ, նրան առաջադրում ենք խնդիր, որտեղ պետք է անցնել խաղադաշտի մի անկյունից մյուսը հնարավորինս փոքր թվով քայլերով: Աշակերտները կառուցում են իրենց ռազմավարությունը, գնում են դեպի վերջնակետ՝ քայլերի նվազագույն քանակով ընտրելով ճիշտ ուղին: Այսպիսով, ռազմավարական մտածողությունը տրամաբանող մարդու կարևոր որակ է: Ռազմավարական մտածողության զարգացումը հնարավոր է վարժությունների և խաղերի միջոցով: Վաղ տարիքից շախմատ խաղալը օգնում է երեխային հետ չմնալ հասակակիցներից, հաղորդակցման խնդիր ունեցող բազմաթիվ երեխաների համար բացում է ճանապարհ դեպի ստեղծագործականություն, նախաձեռնողականություն, շփում: Շփման շրջանակի, լիարժեք ինքնադրսևորման և կայացման հնարավորությունների ընդլայնումը թույլ է տալիս նրանց հաղթահարել պարփակվածությունը, ենթադրյալ խոցելիությունը :

Շախմատային խաղը զարգացնում է այնպիսի համալիր կարևորագույն որակներ, որոնք վաղուց ի վեր ձեռք են բերել հատուկ սոցիալական նշանակություն: Դա մարդկության կողմից երբևէ հորինված լավագույն ժամանցի տեսակներից մեկն է: Հետևաբար, շախմատի արդիականությունը կայանում է նրանում, որ ուղղված է անձի ճանաչողական և ժամանցային գործունեության ակտիվ ձևերով զբաղվելու պահանջմունքը բավարարելու կազմակերպմանը :

2. ՇԱԽՄԱՏԻ ԴԵՐԸ ԱՆՁԻ ԲԱՐՈՅԱԿԱՄԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է աշակերտի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ: Շախմատը նպաստում է նաև աշակերտի ինքնադրսևորմանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը: Շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ: Արվեստի առումով այն զարգացնում է աշակերտի հաշակը, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ: Շախմատը սովորեցնում է հաշվարկել քայլերը ոչ միայն շախմատի տախտակի վրա, այլև կյանքի այլ իրավիճակներում:

Հետազոտողները նշում են շախմատի պարապմունքի ազդեցությունը երեխայի արտաքին և ներքին խոսքի, տրամաբանական մտածողության, կամքի, կյանքի ակտիվության, ճանաչողական պահանջմունքների, քննադատության, ինքնագնահատականի և ինքնավերլուծության, ինքնակրթության, կայունության, մտածողության ինքնուրույնության, գեղագիտական հաշակի դրսևորման վրա: Ընդգրկելով գիտելիքի լայն շրջանակ շախմատային պարապմունքն առավելագույնս նպաստում է անձի մտավոր զարգացմանը: Շախմատի պարապմունքների միջոցով կարելի է մոտենալ նոր տիպի անհատի ձևավորման, բազմակողմանի դիտարկելու, ուսումնասիրելու, կանխատեսելու, քայլերը հաշվարկելու, վերլուծելու ունակությունների, նախաձեռնողականության զարգացմանը, աշխատասիրության, ստեղծագործական ներուժի, բարեխղճության ձևավորմանը: Ուսուցման մեթոդիկայի պահանջները միտված են ոչ միայն շախմատ խաղում երեխաների հիշողության զարգացմանը, ուշադրության ձևավորմանը, այլև սովորողի ընդհանուր հոգեբանական, մտավոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը: Շախմատը զարգացնում է հիշողությունը, թույլ տալիս հետագայում ավելի հեշտ ընկալել նաև դպրոցական այլ առարկաները: Շախմատի պարապմունքների ժամանակ մեծ ուշադրություն է հատկացվում խաղաբարերի դիրքերի վերաբերյալ շախմատային խնդիրների լուծմանը:

Շախմատի պարապմունքների ժամանակ սաները ձևավորվում են որպես մարտիկ՝ հաղթողի հոգեբանությամբ, քանի որ շախմատի էությունն է հաղթել՝ հայտարարել «մատ»: Սա այն կարևորագույն հատկանիշներից մեկն է, որով պարտական ենք շախմատի դասերին: Շախմատի պարապմունքներին հատուկ տեղ է հատկացվում շախմատ խաղի ռազմավարությանը, որը հետագայում դառնում է կյանքի ռազմավարություն: Կյանքը մշտապես ստիպում է մեզ անել այս կամ այն ընտրությունը: «Կողմ» և «դեմ» հանգամանքները կշռելու հնարավորությունը թերևս ամենակարևորն է և օգտակարը, ինչ սովորեցնում է շախմատը: Դպրոցում շախմատի պարապմունքի ժամանակ իրականացվում են մի քանի գործառույթներ.

- Ճանաչողական - Շախմատ խաղալիս երեխան սովորում է տրամաբանորեն մտածել, հաշվարկել գործողությունները, կանխատեսել մրցակցի արձագանքը, համեմատել, սովորում է շատ նոր և

հետաքրքիր բաներ: Խաղը նպաստում է երևակայության, ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

- Դաստիարակչական - Շատ երեխաներ չեն կարող նստել մեկ տեղում և կենտրոնանալ: Շախմատը սովորեցնում է համբերություն, հավաքվածություն, ուշադրություն: Սովորում են մտածված, ինքնուրույն որոշումներ կայացնել և հանգիստ վերաբերվել անհաջողություններին:
- Ֆիզիկական - Խաղատախտակի առաջ երկար նստելը երեխայի համար դժվար է: Պետք է ունենալ մեծ ուժ և տոկունություն: Այդ պատճառով պետք է անընդհատ անցկացնել ֆիզկուլտ դադարներ:

Ուսուցման առաջին տարում երեխան առաջին քայլերն է անում շախմատի աշխարհում. ծանոթանում է շախմատային խաղի, շախմատի տախտակի, ֆիգուրների, դրանց առաջացման պատմության հետ: Սովորում են կատարել դիդակտիկ առաջադրանքներ, սահմանափակ թվով խաղաբարերով խաղարկել դիրքեր, խաղատախտակի առանձին հատվածների վրա ստեղծել խաղային իրավիճակներ: Պարապմունքների ընթացքում կիրառվում են այնպիսի նյութեր, որոնք հետաքրքրություն են առաջացնում. հանելուկներ բանաստեղծություններ, հեքիաթներ, շախմատային մանրանկարներ, բեմադրություն, երգեր շախմատի մասին և այլն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ՇԱԽՄԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Տարրական դպրոցում շախմատի պարապմունքների ազդեցության հետազոտության կազմակերպում

Մեր հետազոտության շրջանակներում ուսումնասիրել ենք մանկապարտեզի ավագ խմբի նախադպրոցականների իմացական կարողությունների և բարոյականային որակների ձևավորման վրա շախմատի ազդեցությունը: Հետազոտական աշխատանքի նախապատրաստական փուլում կատարվել է հետազոտության հիմնախնդրին վերաբերող հոգեբանական, տեսամեթոդական գրականության վերլուծություն, ձևակերպվել են հետազոտության նպատակը, խնդիրները, ընտրվել են աշխատանքի ուղղությունները: Կատարվել է հետազոտության արդյունքների վերլուծություն, ձևակերպել են հիմնական հետևությունները:

Շախմատի խմբային պարապմունքի պլան

Երեխաների թիվը 18՝ :



Տևողությունը՝ 30 րոպե

Թեմա՝ «Փոխանակում: Խաղաթղթերի մոտավոր արժեքները»

Անհրաժեշտ պարագաներ, դիդակտիկ նյութեր - Խաղատախտակներ և խաղաթղթեր: A4 չափի թղթեր, որի վրա ուրվագծված են բոլոր շախմատային ֆիգուրների և զինվորի պատկերները՝ ամեն թղթի վրա մեկ ֆիգուր, ցուցադրական խաղատախտակ:

Նպատակ՝ Ուսուցանել խաղաթղթերի մոտավոր արժեքները և կատարել համարժեք, կամ շահավետ փոխանակումներ: Զևավորել մտածված որոշումներ ընդունելու հմտություններ, ձևավորել ինքնուրույն ուշադրությունը կենտրոնացնելու, հույզերը կառավարելու, մրցակցին ապրումակցելու կարողություններ:

Ընթացքը– Հարց ու պատասխան. <<Երբևէ, որևէ բան փոխանակել եք>>: Բացատրել, թե ինչու է անհրաժեշտ փոխանակումը շախմատում:Ամրապնդել շախմատի խաղադաշտի մասերը՝ կենտրոն, թագուհու և արքայական թևեր, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը: Անվանել և ցուցադրել շախմատային խաղադաշտի մասերը՝ կենտրոնը, թագուհու և արքայական թևերը, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը: Երեխաներին ներկայացնել շախմատային ֆիգուրների և զինվորի պատկերները: Առաջարկել խմբին, ապա անհատական անվանել դրանք հաջորդաբար նշելով ֆիգուրների անվանումները: Եթե երեխան դժվարանում է կամ շփոթվում՝ ուղղել նրան և առաջարկել կրկնել: Այնուհետև երեխաներին ցուցատախտակի վրա ներկայացնել խաղաթղթերի մոտավոր արժեքները, կատարել, թվարկել և անվանել տարբեր փոխանակումներ: Հաջորդ խաղ-վարժանքի համար բաժանվել զույգերի, նստել դեմ դիմաց և նախատեսված խառը շախմատային ֆիգուներն առանձնացնել ըստ գույների, անվանել գույները և տեղադրել համապատասխան ֆիգուրներն իրենց տեղերում:

Ֆ/դ /Շախմատային բառեր/

Ամփոփում - Երեխային առաջարկել խաղ «Կրկնի՛ր և շարունակի՛ր»:

Խաղի նպատակն է զարգացնել երեխաների խաղաբարերի մոտավոր արժեքները հիշելու կարողությունները, հիշողությունը, ուշադրությունը:

Խաղի ընթացքը - Մանկավարժը ասում է նախադասություն: Օրինակ. «Ես վերցրեցի սպիտակ փիղ և փոխանակեցի նավակի հետ»: Երեխան կրկնում է մանկավարժի նախադասությունը և փոխում գույնը, օրինակ. «Ես վերցրեցի սև փիղ և փոխանակեցի նավակի հետ»: Այսպես խաղում են և նշում շախմատային ֆիգուրները: Եթե երեխան շփոթվում է ուղղում ենք երեխային: Խաղը առաջին անգամ խաղալու ընթացքում կարելի է օգտագործել թղթից կտրատված ֆիգուրներ և հերթականությամբ դասավորել սեղանին, այնուհետև փորձել փոքր-ինչ բարդացնել և խաղալ առանց թղթե ֆիգուրների:

Տնային հանձնարարություն՝ կարդալ դասը,պատասխանել գրքի հարցերին, խաղալ <<QR>> ծածականշանով խաղը:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Պարապմունքին հետազոտության մասնակից դարձրեցինք ծնողների և մանկավարժների: Մեր կարծիքով անձի զարգացման վրա շախմատի պարապմունքն ունի դրական ազդեցություն: Պարապմունքը նպաստեց երեխաների հիշողության, ուղեղի զարգացման, տրամաբանության, արագ կողմնորոշվելու վրա: Երեխաները ակտիվ մասնակցեցին պարապմունքին, իսկ խաղն օգնում է զարգացնել մտավոր ընդունակությունները, ուշադրությունը, կենտրոնացումը, մտածելու ունակություն: Շախմատը երեխաների մոտ զարգացնում է տարբեր խաղային իրավիճակներում կողմնորոշվելու և լուծումներ գտնելու հարցում: Շախմատը ազդում է աշակերտի հիշողության զարգացման վրա, ձևավորում սթափ մտածելակերպ: Շախմատը երեխային սովորեցնում է գիտակցված քայլ կատարելու հմտություն, զարգացնում է արագ մտածելու կարողությունը, հաղթանակի և պարտության զգացումը ճիշտ ընկալելը: Շախմատի պարապմունքների ժամանակ մեծ ուշադրություն է հատկացվում խաղաբարերի դիրքերի վերաբերյալ շախմատային խնդիրների լուծմանը:

Շախմատի պարապմունքների ժամանակ սաները ձևավորվում են որպես մարտիկ՝ հաղթողի հոգեբանությամբ, քանի որ շախմատի էությունն է հաղթել՝ հայտարարել «մատ»: Սա այն կարևորագույն հատկանիշներից մեկն է, որով պարտական ենք շախմատի դասերին: Շատ երեխաներ չեն կարող նստել մեկ տեղում և կենտրոնանալ: Շախմատը սովորեցնում է համբերություն, հավասարակշռություն,

ուշադրություն, սովորում են մտածված, ինքնուրույն որոշումներ կայացնել և հանգիստ վերաբերվել անհաջողություններին:

Ուսուցման առաջին տարում երեխաները առաջին քայլերն են անում շախմատի աշխարհում. ծանոթանում շախմատային խաղի, շախմատի տախտակի, ֆիգուրների, առաջացման պատմության հետ: Պարապմունքների ընթացքում կիրառվում են նյութեր, որոնք հետաքրքրություն են առաջացնում. հանելուկ, բանաստեղծություն, հեքիաթ, շախմատային մանրանկարներ շախմատի մասին, որոնք զարգացնում են բարոյականային որակներ ավագ նախադպրոցականների մոտ:

Եզրակացություններ

Ելնելով կատարված հետազոտությունից՝ կարող ենք եզրակացնել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրներից մեկն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի շախմատի համար: Խոսքը գնում է արժեքային համակարգի ձևավորման մասին շախմատի դասաժամերի ընթացքում:

Մանկավարժահոգեբանական գրականության ուսումնասիրության և հետազոտական աշխատանքի արդյունքներից՝ կարելի է եզրակացնել.

- Կրթության ոլորտում կատարվող փոփոխությունները, չափորոշչային նոր պահանջները, կարողունակությունների վրա հիմնված կրթությունը շախմատի ներուժի իրացման համար տարրական դասարաններում հեռանկարներ են բացում:
- Մասնակցությունը շախմատի պարապմունքներին ձևավորում է երեխայի կամային որակները, նպատակասլացությունը, պայքարելու ունակությունը, աշխատունակությունը և այլն: Ֆիգուրների արժեքների ուսումնասիրության, շախմատային խաղերի ժամանակ բարելավվում է հիշողությունը, զարգանում տրամաբանական մտածողությունը, պատկերների տարածական ընկալումը, երևակայությունը:
- Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ կարևորը դասը սիրելն է և ամեն դասից պետք է նոր օգտակար բան սովորել, հարստացնելով գիտելիքների ու հմտությունների պաշարը:

Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առարկայական չափորոշիչներ. https://escs.am/am/search
2. Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview
3. Բաբանսկի Յու. - Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:
4. Միքայելյան Մ. Շախմատի դասավանդման ներգործությունը հոգեկան որակների ձևավորման վրա, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» Գիտական կոնսորցիումի հանդես, Եր., 2015/1, էջ 125 - 138:
5. Շախմատային կրթության արդի վիճակը և զարգացման միտումները: Միջազգային գիտաժողովի նյութեր, Ծաղկաձոր, 2019.-Եր.: Քոփի Փրինթ, 2019. - 144 էջ:

Հավելված

Ուսուցման այս եղանակը նպաստում է ուսման դժվարություններ կամ սահմանափակ կարողություններ ունեցող աշակերտների ինտեգրմանը